

PLUSQUAMPERFECT ԺԱՄԱՆԱԿԱԶԵՎԻ ՏԻՊԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԳՐԱԲԱՐՈՒՄ, ԳԵՐՄԱՆԵՐԵՆՈՒՄ ԵՎ ԼԱՏԻՆԵՐԵՆՈՒՄ

ԼԱԼԻԿ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Plusquamperfect-ը բաղադրյալ ժամանակաձև է. այն գործածվել է որոշ հին լեզուներում (լատիներենում, հին հայերենում և այլն), պահպանվել է արդի գերմաներենում, իսկ ժամանակակից որոշ լեզուներում, ինչպես՝ ռուսերենում և հայերենում, դուրս է եկել բայական համակարգից¹: Այդ ժամանակաձևը գրաբարի քերականությունների մեջ անվանվել է նաև **գերակատար**, որ քերականական իմաստով համապատասխանում է արդի հայերենի անցյալի վաղակատար և անցյալի հարակատար ժամանակային ձևերին:

Plusquamperfect-ը (բառացի՝ «ավելի (վաղ), քան անցյալ կատարյալը») ցույց է տալիս այնպիսի գործողություն, որ կատարվել է մեկ այլ գործողությունից առաջ: Այդ ժամանակաձևի կազմավորումը, խոնարհման տիպերը, բաղադրիչների քանակը և դրանց շարադասությունը տարբեր լեզուներում տարբեր դրսևորումներ ունեն, որ պայմանավորված է ինչպես այդ լեզուների քերականական կառուցվածքով, այնպես էլ քերականական իմաստների արտահայտման միջոցներով:

Plusquamperfect-ի ժամանակաձևերը տիպաբանական որոշակի յուրահատկություններ են ցուցաբերում գրաբարում, լատիներենում և գերմաներենում, ուստի այդ լեզուներում տվյալ ժամանակաձևի տիպաբանական քննությունը կարող է վեր հանել որոշակի բնորոշ գծեր, որոնք հատուկ են բայական համակարգին և մասամբ պայմանավորված են տվյալ հանրությունների լեզվամտածողական առանձնահատկություններով:

Ա. Գրաբարում այդ ժամանակաձևի կազմությանը մասնակցում են անցյալ դերբայի բայաձևերը և օժանդակ բայի անցյալի ձևերը: Այս դեպքում դերբայական հիմքի կառուցվածքային գործոնը՝ արմատական թե բաղադրյալ-ցոյական, վերլուծական բայի ձևավորման հարցում էական դեր չի կատարում, ինչպես՝ *կոչեալ էի* և *կոչեցեալ էի*:

Ներգործական սեռի բայերը նույն ձևով կարող են արտահայտել ներգործական և կրավորական սեռերի նշանակություն, հմմտ. *կոչեալ էր* «կանչել կանչվել էր, կանչած՝ կանչված էր»:

Չեզոք սեռի բայերն արտահայտում են միայն չեզոք սեռի նշանակություն², ինչպես՝ *հասեալ էր* «հասել էր, հասած էր»:

¹ Տե՛ս **Старичёнок В. Д.** Большой лингвистический словарь, Ростов-на-Дону, 2008:

² Տե՛ս **Լ. Խաչատրյան, Գ. Թոսունյան**, Գրաբարի դասագիրք, Եր., 2003, էջ 228.

Գրաբարում այդ ժամանակաձևի իմաստը կարող է արտահայտվել նաև վերլուծական այլ կառուցատիպերով՝ անցյալ դերբայով, օժանդակ բայի և անձնական դերանվան սեռական հոլովով³, ինչպես՝ գրեալ էր իմ «ես գրել էի», գրեալ էր մեր «մենք գրել էինք» և այլն: Սա պասիվ կառուցվածքի մի արտահայտություն է, որ մնացուկային ձևով պահպանվել է գրաբարում. հմմտ. *ռուս. написано мной*:

Բ. Գերմաներենում Plusquamperfect-ը կազմվում է *haben* կամ *sein* օժանդակ բայերի անցյալի ձևերով և լիմաստ բայերի Partizip-2 դերբայական հիմքով⁴: Վերջինս համապատասխանում է արդի հայերենի վաղակատար դերբային, ինչպես՝ *ich hatte gelesen* «կարդացել էի», *wir hatten gelesen* «կարդացել էինք», *ich war gekommen* «եկել էի», *wir waren gekommen* «եկել էինք»:

Կրավորական սեռի իմաստն արտահայտելու համար գործածվում է կրավորական սեռի ցուցիչը՝ *sich*: Ինչպես՝ *ich hatte mich vorbereitet* «պատրաստվել էի, պատրաստված եմ եղել», *wir hatten uns vorbereitet* «պատրաստվել էինք, պատրաստված ենք եղել»:

Գերմաներենում նույնպես Partizip-2 դերբայական հիմքի կառուցատիպը էական նշանակություն չունի բայաձևի տիպաբանության հարցում:

Տիպաբանական ի՛նչ հատկանիշներով են բնութագրվում Plusquamperfect-ի ժամանակաձևերը գրաբարում և գերմաներենում:

1. Գրաբարում և գերմաներենում Plusquamperfect-ն ունի վերլուծական կառուցատիպ՝ անկախ բայի սեռից, հմմտ. *սիրեալ էի – հատեալ էի* և *ich hatte gelesen – ich hatte geflogen*:

2. Գրաբարում Plusquamperfect-ի կազմությանը մասնակցում են *ել* օժանդակ բայի անցյալի ձևերը (*գրեալ էի – գրեալ էաք*), մինչդեռ գերմաներենում գործածվում են երկու օժանդակ բայեր՝ *haben, sein* (ձևակազմական մակարդակում հանդես են գալիս նրանց անցյալի ձևերը՝ *hatte, war*):

3. Գրաբարում այդ ժամանակաձևերը կազմվում են *անցյալ դերբայով*, գերմաներենում նրանց կազմությանը բայի հիմնական ձևերից մասնակցում է Partizip-2-ը՝ *gesungen* («երգել»), *gelegen* («պառկել»), *geflogen* («թռչել»), *gewesen* («լինել»), *geschrieben* («գրել») և այլն:

4. Գրաբարում Plusquamperfect-ը *բայասեռի* տարբերակում չի դրսևորում. ներգործական սեռի բայերը նույն ձևով կարող են արտահայտել նաև կրավորական սեռի իմաստ, գերմաներենում կրավորականի իմաստն արտահայտվում է սեռի հատուկ ցուցիչով՝ *sich*:

5. Գրաբարում և գերմաներենում Plusquamperfect-ի քերականական իմաստը արտահայտվում է *սպասարկու բառերի միջոցով*:

³ Տե՛ս **Ա. Աբրահամյան**, Գրաբարի ձևնարկ, Եր., 1976, էջ 215:

⁴ Տե՛ս **Канишева Е. Н., Воскресенская Л. И. и др.**, Курс немецкого языка, М., 1979, էջ 308-309, **Дианин Н. А., Дюжикова Л. Б. и др.**, Учебное пособие по немецкому языку, Ленинград, 1980, էջ 42-43:

6. Plusquamperfect-ի ժամանակաձևերը գրաբարում շարադասորեն արտահայտվում են *դերբայ+օժանդակ բայ* կառուցատիպով, գերմաներենում՝ *օժանդակ բայ+դերբայ* կառուցվածքով:

Գ. Լատիներենում Plusquamperfect-ի ժամանակաձևերը բաշխվում են երկու եղանակի միջև՝ սահմանական և ստորադասական: Սահմանական եղանակի շրջանակներում այդ բայաձևերն արտահայտում են վաղակատար ու հարակատար ներկայի և անցյալի քերականական իմաստներ:

Plusquamperfect-ի կառուցատիպերը պայմանավորված են խոնարհման տիպերով. ներգործաձև խոնարհումն ունի համադրական, իսկ կրավորաձև խոնարհումը՝ բաղադրյալ վերլուծական կազմություն (participium perfecti passivi + օժանդակ բայ):

Սահմանական եղանակի ներգործական խոնարհման Plusquamperfect-ը կազմվում է բայի կատարյալի հիմքից և esse օժանդակ բայի անցյալի խոնարհված ձևերից՝ -eram, -erās, -erat, -erāmūs, erātis, -erant⁵.

Ներգործական Plusquamperfect-ի չորս խոնարհումներն էլ ունեն համադրական կառուցատիպ, ինչպես՝ 1. amāvēram, amāvērāmūs, 2. docuēram, docuērāmūs, 3. scripsēram, scripsērāmūs, 4. finiēram, finiērāmūs. Հմմտ. docuēram «ուսանել եմ/էի, ուսանած եմ/էի», finiēram «ավարտել եմ/էի, ավարտած եմ/էի»:

Կրավորաձև խոնարհման Plusquamperfect-ը կազմվում է կրավորաձև անցյալ դերբայով և esse օժանդակ բայի անցյալի ձևերով, ինչպես՝ amātus eram «սիրվել էի, սիրված էի»:

Այս դեպքում Plusquamperfect-ն ունի բաղադրյալ-վերլուծական կառուցատիպ. ենթական և դերբայը համաձայնում են թվով և սեռով (արական, իգական և չեզոք). հմմտ. amātus (amāta, amātum) eram: Օրինակներ ըստ խոնարհումների՝ 1. amātus (-a, -um) eram «սիրվել եմ/էի, սիրված եմ/էի», 2. doctus (-a, -um) eram «կրթվել եմ/էի, կրթված եմ/էի», 3. stātus (-a, -um) erat «կանգնեցվել է/էր, կանգնեցված է/էր», 4. finitus (-a, -um) erat «ավարտվել է/էր, ավարտված է/էր»:

Ստորադասական եղանակի Plusquamperfect-ն արտահայտում է անցյալ ժամանակում ցանկական և հարկադրական գործողության իմաստ: Ներգործաձև խոնարհման բայաձևերը կազմվում են երկրորդ հիմքից -ŕsse- մասնիկով և դիմային վերջավորություններով՝ -ŕssem, -ŕssēs, -ŕsset, -ŕssēmūs, -ŕssētis, -ŕssent: Խոնարհումն ունի համադրական կառուցատիպ. բայահիմքը թարգմանվում է հարակատար դերբայով:

Օրինակ՝ 1. amāvŕssem «սիրած լինեի/կլինեի/պիտի լինեի», 2. docuŕssem «ուսանած լինեի/կլինեի/պիտի լինեի», 3. scripsŕssem «գրած լինեի/կլինեի/պիտի լինեի», 4. finiŕssem «ավարտած լինեի/կլինեի/պիտի լինեի»:

Ստորադասական եղանակի *կրավորաձև խոնարհման* բայաձևերը

⁵ См. у Мирошenkova B. И., Федоров Н. А. Учебник латинского языка, М., 1976, էջ 104-105:

ձևավորվում են կրավորական անցյալ դերբայով և օժանդակ բայի ստորադասական եղանակի անցյալի ձևերով, ինչպես՝ -ēssēm, -ēssēs, -ēssēt, -ēssēmūs, -ēssētis, -ēssētis⁶: Այս դեպքում բայաձևերն ունեն վերլուծական կառուցատիպ. դերբայն ու օժանդակ բայը համաձայնում են թվով և սեռով (արական, իգական և չեզոք), օրինակ՝ amātus (amāta, amātum) ēssēm:

Օրինակ՝ 1. amātus (-a, -um) ēssēm (սիրված լինեի/կլինեի/պիտի լինեի), amāti (-ae, -a) ēssēmūs, 2. doctus (-a, -um) ēssēm (կրթված լինեի/կլինեի/պիտի լինեի), docti (-ae, -a) ēssēmūs, 3. scriptus (-a, -um) ēssēm (գրված լինեի/կլինեի/պիտի լինեի), scripti (-ae, -a) ēssēmūs, 4. fīnītus (-a, -um) ēssēm, fīnīti (-ae, -a) ēssēmūs, հմմտ.՝ fīnītus (-a, -um) ēssēt (ավարտված լինեի/կլինեի/պիտի լինեի):

Քննարկվող լեզուներում Plusquamperfect-ը քերականական իմաստների արտահայտման առումով ձևակազմական տարբերություններ է դրսևորում, որով պայմանավորված է նրա տիպաբանական բնութագրերը:

Ըստ այդմ, տիպաբանական ի՛նչ հատկանիշներով է բնութագրվում Plusquamperfect-ի ժամանակաձևը լատիներենում և գրաբարում:

1. Լատիներենում այն ունի համադրական կառուցատիպ, որ պայմանավորված է բայի սկզբնաձևային ներգործական սեռով. amāvērā «սիրել էի, սիրած էի», կրավորական սեռի Plusquamperfect-ն ունի վերլուծական կառուցատիպ. amātus ērā «սիրվել էի – սիրված էի», գրաբարում այն ունի վերլուծական կառուցատիպ՝ անկախ բայի սեռից՝ *սիրեալ էի*:

2. Գրաբարում Plusquamperfect-ի օժանդակ բայը հանդես է գալիս իբրև վերլուծական ժամանակաձևի բաղադրիչ, լատիներենում օժանդակ բայը երկակի գործառույթ ունի. ներգործաձև խոնարհման դեպքում հանդես է գալիս որպես խոնարհման (դիմաթվային) վերջավորություն (amāv-ērā, amāv-ērās, amāv-erat), կրավորաձև խոնարհման դեպքում՝ որպես օժանդակ բայ (amātus ērā, amātus ērās, amātus erat):

3. Գրաբարում Plusquamperfect-ի ժամանակաձևը կազմվում է *անցյալ դերբայով*, որ կարող է հանդես գալ հիմքի ձևակազմական տարբերակներով՝ *սիրեալ/սիրեցեալ*, ինչպես նաև բաղադրության քերականական և պատճառական ածանցներով՝ *մերձեցեալ*, *զոհացեալ*, *թոռուցեալ*, *մարտուցեալ*, *մատուցեալ*, *կորուսեալ* և այլն, լատիներենում վերլուծական Plusquamperfect-ի դերբայական բաղադրիչ է դառնում կրավորական անցյալ դերբայը (participium perfecti passivi):

4. Գրաբարում Plusquamperfect-ը *բայասեռի* տարբերակում չի դրսևորում. ներգործական սեռի բայերը նույն ձևով կարող են արտահայտել նաև կրավորական սեռի իմաստ, *սիրեալ էի* «սիրել/սիրվել եմ,

⁶ St´u Винничук Л. Латинский язык, М., 1985, էջ 106:

սիրած//սիրված են», լատիներենում ներգործական սեռի իմաստ արտահայտում են համադրական բայաձևերը *amāveram*, կրավորական սեռի իմաստ՝ վերլուծական բայաձևերը՝ *amātus eram*:

5. Գրաբարում Plusquamperfect-ի քերականական իմաստն արտահայտվում է սպասարկու բառերի միջոցով, լատիներենում այն արտահայտվում է թե՛ մասնիկավորման և թե՛ սպասարկու բառերի միջոցով:

6. Գրաբարում Plusquamperfect-ը պատկանում է *դերբայ+օժանդակ բայ* կառուցատիպին, լատիներենում՝ մի դեպքում՝ *բայահիմք + օժանդակ բայ* (դիմային վերջավորություն), երկրորդ դեպքում՝ *բայահիմք + քերականական սեռի ցուցիչ + օժանդակ բայ* կառուցատիպին:

7. Գրաբարում ենթակայի և բայաձևի միջև գործում է *դեմքի և թվի համաձայնություն*, լատիներենում Plusquamperfect-ի կրավորական խոնարհման դեպքում գործում է նաև *անվանական սեռի համաձայնություն*՝ *amātus* (*amāta*, *amātum*) *eram*:

Գրաբարի, գերմաներենի և լատիներենի բայական համակարգերում Plusquamperfect ժամանակաձևի տիպաբանական քննությունը վեր է հանում տարբեր հանրությունների լեզվամտածողական յուրահատկությունները, որոնցով պայմանավորված են այդ ժամանակաձևի արտահայտության և բովանդակության պլանների փոխհարաբերությունները:

Բանալի բառեր - *գերակատար, ներգործաձև խոնարհում, կրավորաձև խոնարհում, տիպաբանական բնութագիր, վերլուծական կառուցատիպ, համադրական կառուցատիպ*

ЛАЛИК ХАЧАТРИАН – Типология глагольных форм Plusquamperfect в древнеармянском, немецком и латинском языках. – В древнеармянском, немецком и латинском языках Plusquamperfectum типологически характеризуется противопоставлением действительного и страдательного залогов, синтетическим и аналитическим структурными типами парадигмы, особыми личными окончаниями, различием презентных и аористных основ спряжения, функциональной ролью вспомогательного глагола.

Ключевые слова: *плюсквамперфект, действительный залог, страдательный залог, типологическая характеристика, аналитический структурный тип, синтетический структурный тип*

LALIK KHACHATRYAN – The Typology of Verbal Form Plusquamperfect in Old Armenian, German and Latin. – In Old Armenian, German and Latin Plusquamperfectum typologically is characterized with active-like and passive-like conjugations, different basic forms of stems, synthetic and analytic constructions in verbal paradigms, and with the functions of auxiliary verbs.

Key words: *plusquamperfectum, active-like conjugation, passive-like conjugation, typological characteristics, analytical type, synthetic type*